մի՞ք որ դա աւրհնի. եւ նա ասաց թէ Երբ իշխանքն կամին, նա՛ մեք չեմք կարեր բան ասել. և Վարդապետն ընդ ժողովուրդն ասաց թէ Դուք ի՞նչ կ'ասէք. և նոքա ասացին թէ Մեք կ'ասեմք թէ աղէկ մարդ է, արժան է։ Եւ Վարդապետն ասաց թէ Խիստ բարի։ Եւ եհարց ընդ նոսա թէ Դու որո՞ւ ժողովուրդ ես. Տէր Դանիէլին. Դու որո՞ւ ժողովուրդ ես. Տէր Պետրոսին. եւ այլ՝ թէ Տէր Խաչատուրին եւ Տէր Ներսէսին։ Եւ Վարդապետն ասաց թէ Զայս մարդ որ ես աւրհնեմ, նա՛ դուք զձեր երէցն ձգելով սորա ժողովուրդ կու լինէ՞ք։ Ասացին նոքա թէ Զենք ձգեր զմեր երէցն։ Ասաց Վարդապետն. Թէ չէք ձգեր զձեր երէցն, ապա ես զայն աւրհնեմ, նա՛ ի՞նչ ուտէ, զո՞վ հովուէ. երբ դուք նորա ազգ էք՝ նորա ժողովուրդ չէք լինիր, ապա ո՞վ կու ձգէ զիր էրէցն եւ դորա լինի, կամ թէ երթայ ի՞նչ ուտէ, կամ հովիւ որո՞ւ վրայ դնեմ զայս։ Ահա՛ աւրհնեմ, չկայ ժողովուրդ, հաց չկայ, լինի հովարտա, ընկնի ի գերեզմաններն ու հոգին դուրս գայ, կամ այլվի առնէ զիր էսկիճուրթիւնն եւ ակռովն քաշէ զսեկն եւ զիս անարգէ եւ զպատճառ եղօղքն։ Ես զայդ չեմ առներ. երթա՛ք բարով։ Քըշքըշ եղաւ գնացին։ Յետոյ Գրիգորն կանգնած էր, և գնա տվին ի բերան դրսի եղած մարդիքն, քանզի չէին իշխեր բան խնդրել ի Վարդապետէն. եկան անկան ի Տէրտէրս, և նա ասաց՝ Չեմ կարող։ Յետոյ Գրիգորն որ տարաւ ի ներս, նա՛ Վարդապետն չեխեց եւ բազում բանս ասաց նորա թէ Դու աղէկ բաներու գլուխ կը դնես, դու այդ բաներուդ կտրվիր, կ'ասեմ քեզի։ Նոյնպէս եւ Տէր Յովանէսին մեր. նորա փեսի աղբարն՝ Ուսկիւտարու Պետրոսն եկեալ՝ մերթ աղաչանօք և մերթ նախատանօք Տէրտէրիս և վարպետիս՝ աւագ սարկաւագութիւն ուզելով. եւ երկիր զնորա անունն Այսահար եղեալ էին. ի ժամանակ